

Առ Խօրով մինչ կայր ի բանսն յԷՏԻՆՈՒ

Էւուք զփորձանակրութեան յեղակարծ պատաւ
հումն որ զքեւ պատէր եւ յոյժ տխրեցաք ըստ բանի
սրբազան առաքելոյն թէ Վշտանայ ինչ մի անգամ՝
վշտանան եւն: Բայց զի՞նչ ասեմ, սիրելի, որոյ ոչ
կարեմք բանիւ եւ արդեամբք օգնել բնաւին: Երանի՛
թէ կարէաք բանիւք եւս բուժել զցաւդ անհնարին:
Եւ ի տար տեսանի արդեամբքն ի նեղութիւնս քո
հասանիլ՝ հանելով զպատուականդ յանարգէն, զի բե-
րան Տեառն կոչէաք: Զքոյդ աղէտ տարակուսանաց
թէ զմահ որդոյ Իմիրզի վաղակտուր եւ մանկամեռ
Յակոբի աւրնթեր քո յարգելանի վախճանելոյ, ուր
թողեր զսուգ տխրութեան քո եւ նոր կսկծովդ դառ-
նացար: Արդ մոռացար զհօր դորա զմահ ի տար աշ-
խարհում յԱրվանիզի եւ նոր բորբոքեցաւ հուր ի
վերայ հրոյ սրտի քում, եւ զխղճութիւն դորա ա-
չօք քո տեսեր: Օտար եւ պանդուխտ ի բանտի մե-
ռեալ՝ զգին հանին յարգելանէն ուստի յուսայրն կեն-
դանի ելանել, եւ դու միայնակ լցեալ դառնութեամբ
մնացեր: Ապուեցան ծախեցան ինչք ձեր ի զրունս այլ-
ազգեաց ընդ վայր, եւ դուք զամօթ կրեցիք ի մէջ
վաճառականաց եւ եզայք յարգելանս պարտական եւս
արքունեաց: Որ ոչ էր դորձդ այդ յանկ ձեր եւ ոչ էր
ջան վասն վաճառականութեան, այլ ի պատրանաց
անոպայից փասքուսից փառամոլեցայք, պարապորդ
գտեալ զձեզ խարբալեցին որպէս զփորձիչ զանփորձսդ
ի դոյն ջան, ըստ որում նախնիքն ասէին յառակս.
Մարդ մարդոյ քահանայ, մարդ մարդոյ սատանայ:
Որոյ կատարածն եւ մահն պատահական եւ վախճանն
ամօթ գլխիկորութեան: Եւ արդ դրդողքն զձեզ՝ ի հե-
ռաստանէ հային եւ մատամբ միով օգնել բնաւին ոչ